Վերջերս հանրությանը ներկայացվեց «Հայկական համաշխարհային Կոնգրեսի» վիճակագրական աղյուսակը հայ ժողովրդի բնական աճի եւ կորուստների նշումներով: Ուսանելի, զգեստող աղյտակ հիշեցնող աղյուսակ է, հի ենթադրենք. 1887 թվականին աշխարհում հայերի թիվը 5 միլիոն է եղել: Յեղասպանության, դատերազմների զոհերի եւ ի հետեւանք չծնված երեխաների թիվը կազմել է 12 միլիոն: Վերջին հարյուր տարում ոմանցվել է 19.6 միլիոն հայություն. այսինքն բնակչության ընդհանուր աճի 83 տոկոսը: Այսօր աշխարհում աղյուսակ է 9 միլիոն հայություն. այնինչ ամենահամեստ դայմաններում (1.5-2 տոկոս) հայերի բնդհանուր թիվն աշխարհում 1994 թվականին դիտի լիներ 40.630.000:

Սիրեցեք այս դաժան բանաստեղծությանն ի տես. թե մասավորականությունը. թե հաղթական կամակցությունները գլխավորող ան ձիրք վերջնականապես դիտի նկատի առնեն առկա խոցությունը: Այսդիսի ցամաքրիվ, ջրազնջ ու խաչական դայմաններում ինչ՞ա՞ն կլինի հայության բնակչության աշխարհում. ասենք. 2010 թվականին (լա՛վ. առաջին ու երկրորդ կարգի հայությունը միացենք): Դժվար անչափ դժվար է դատասխանել: Իսկ դատասխանը դիտի է. բա՛ ի՛ տեսց. թե հայությունը:

Ցիաշ է, ոմանք կարող են նաեւ տարիներ անց, տարաբերության մեջ. Լ. Գ. Տրոցկու նման «հայտնատեսություններ» անել: Խորհրդանշական. սակայն ուշացած, անչա՛փ ու՛ ուշացած. երբ, ինչպես ասում են. ոչ միայն բոլոր գնացքներ մեկնած կլինեն, այլ կայարան անգամ չի լինի գեր մի հասիկ գնացք գտնելու համար:

Թեեւ սիրելիս նույնպես կարենանք. աշխարհին հերթական ու վերջին դասը. խրատը տալով. թե ինչպես չի կարելի ազգ ու հողդ ժողովուրդ ու դետություն դահել:

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԿԱՍԿԱՎՈՐԵՐ

Խաղաղության կորպուս-Հայաստան

«Խաղաղության կորպուս» (Peace Corps) կազմակերպությունը Հայաստանում իր գրասենյակն է բացել գրեթե 3 տարի առաջ: Ե՞րբ եւ ինչպե՞ս է ստեղծվել կազմակերպությունը, ի՞նչ ծրագիր է իրագործում Հայաստանում: Այս հարցերին խնդրեցինք պատասխանել «Խաղաղության կորպուս-Հայաստան» կազմակերպության տնօրեն, հայուհի Սիլվա Էբյանին, որի հետ զրույցի բովանդակությունը ներկայացնում ենք մեր ընթերցողին:

«Խաղաղության կորպուս» գաղափարը ծագեց 1961-ին, երբ ԱՄՆ նախագահ Ջոնը Ֆ. Քենեդին դիմեց ամերիկացի ուսանողությանը՝ կոչ անելով իրենց կյանքի 2 տարին նվիրել այլ երկրների մարդկանց օգնելուն: Բազմաթիվ ամերիկացիներ սկզբում դրանք ուսանողներ էին, հետո նրանց միացան տարբեր տարիքի մարդիկ, հետեւելով այդ կոչին, հիմնեց կամավորներ սկսեցին մեկնել Ասիայի, Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի երկրներ՝ նրանց անհրաժեշտ մարդկային, մասնագիտական օգնություն ցույց տալու, ինչպես նաեւ խաղաղության գաղափարը տարածելու համար: Կազմակերպությունն այդպես էլ կոչվում է Խաղաղության կորպուս, քանի որ, նպաստելով ժողովուրդների փոխըմբռնմանը, նպաստավոր պայմաններ է ստեղծում խաղաղության համար: Կամավորական շարժումը նաեւ ամերիկացիներին այդ ժողովուրդների կյանքի եւ կենցաղի առանձնահատկություններին ծանոթացնելու, նրանց մասին ստույգ տեղեկություններ հայտնելու հնարավորություն է ընձեռում: Խաղաղության կորպուսի կամավորներն աշխատում են ամենատարբեր բնագավառներում: Մասնագետների բնագրությունը կախված է երկրի պահանջմունքներից: Խաղաղության կորպուսն այս կամ այն երկիր է «մտնում» այդ երկրի կառավարության խնդրանքով, որն էլ հենց ներկայացնում է անհրաժեշտ մասնագետների հայցը: Հայաստանի կառավարությունն, օրինակ, առաջնահերթ է համարել փոքր բիզնեսի եւ անցկացնելի ուսուցման մասնագետների անհրաժեշտությունը: Կամավորների առաջին 40 հոգանոց խումբը, որ 1992 թ. ձմռանը ժամանեց Հայաստան, համալրված էր հենց այդ մասնագետներով: Այսօր Խաղաղության կորպուսն բնդլայնում է իր գործունեության շրջանակները՝ համագործակցելով հայ գործընկերների հետ. նաեւ առողջապահության բնագավառում:

Կամավորների հերթական խումբը, ժամանելով երկիր, եռամսյա ուսուցում է անցնում, որի ընթացքում այդ երկրի առանձնահատկություններին, ժողովրդի լեզվին, մշակույթին, ավանդույթներին, դպրոցական բնագավառում գործունեություն է: Բիզնեսի խորհրդատուներ ուսումնասիրում են տնտեսությունը, դրա կազմակերպումը, ուսուցիչներ կրթական համակարգը եւ այլն: Քաղաքի նախադասարասությունը. Գյումրիի կամավորներն ավելի քան 50 փոքր ձեռնարկությունների օգնել են սկսելու իրենց բիզնեսը տիկնոջմի արտադրության, բոլի մշակման եւ այլ բնագավառներում: Հայ FM ռադիոն ռադիոկայանը, որ լայն ժողովրդականություն ունի այսօր Հայաստանում, նույնպես ստեղծվել է Խաղաղության կորպուսի կամավորների օգնությամբ: Բիզնեսի խորհրդատուներ հայ սկսնակ գործարարներին օգնում են խորհուրդներով, ծրագրերի մշակման, գործ սկսելու, վարելու, նախագծելու, արտադրանք տալու, առաքելու վերաբերյալ գիտելիքներ տալիս նրանց:

Այսօր Հայաստանի տարբեր շրջաններում աշխատում են Խաղաղության կորպուսի 46 կամավորներ, որոնց մեկ երրորդը բիզնեսի խորհրդատուներ են, երկու երրորդը ուսուցիչներ: Կամավորներն իրենց աշխատանքի համար չեն վարձատրվում (դրա համար էլ կամավորներ են կոչվում), բայց ամերիկյան կառավարությունը նրանց հատկացնում է ոչ մեծ մի գումար կենսապահովման համար:

Ներկայումս Խաղաղության կորպուսը գործում է աշխարհի 93 երկրներում. Ֆինանսավորվում է ամերիկյան կառավարությունից: Հանրապետությունից հետո տեղի է ունենում երդման արարողություն եւ ավարտական հանդիսություն: Ամեն տարի համաձայնագրերի գերատեսչությունների հետ ճշտվում է, թե հաստատությունում որտեղ են գտնում ամերիկացի կամավորների կարիքը: Անհրաժեշտության դեպքում կատարվում են տեղափոխություններ:

Կամավորները սովորաբար նախաձեռնությամբ կարող են բնդգրկվել միությունների, զարգացման ասոցիացիաներում, բացի իրենց հիմնական աշխատանքից ծավալել որեւէ այլ օժանդակ գործունեություն, իրագործել իրենց անձնական ծրագրերը: Օրինակ, կամավորներից մեկի ջանքերով Ստեփանավանում ստեղծվեց բեյսբոլի լիգ, որը դարձել է տեղացի երեխաների սիրած զբաղմունքը. Եղեգնաձորում աշխատող մի ուրիշ կամավոր նախաձեռնել է ծխախոտի չարացման ծրագիր՝ Գյումրիում կամավորներն ավելի քան 50 տարեց անձանց օգնել են սկսելու իրենց բիզնեսը տիկնոջմի արտադրության, բոլի մշակման եւ այլ բնագավառներում: Հայ FM ռադիոն ռադիոկայանը, որ լայն ժողովրդականություն ունի այսօր Հայաստանում, նույնպես ստեղծվել է Խաղաղության կորպուսի կամավորների օգնությամբ: Բիզնեսի խորհրդատուներ հայ սկսնակ գործարարներին

ներում անցկացվում են ճանաչողական շրջագայություններ: Դասընթացներից հետո տեղի է ունենում վերջնական հանդիսություն: Ամեն տարի համաձայնագրերի գերատեսչությունների հետ ճշտվում է, թե հաստատությունում որտեղ են գտնում ամերիկացի կամավորների կարիքը: Անհրաժեշտության դեպքում կատարվում են տեղափոխություններ:

Կամավորները սովորաբար նախաձեռնությամբ կարող են բնդգրկվել միությունների, զարգացման ասոցիացիաներում, բացի իրենց հիմնական աշխատանքից ծավալել որեւէ այլ օժանդակ գործունեություն, իրագործել իրենց անձնական ծրագրերը: Օրինակ, կամավորներից մեկի ջանքերով Ստեփանավանում ստեղծվեց բեյսբոլի լիգ, որը դարձել է տեղացի երեխաների սիրած զբաղմունքը. Եղեգնաձորում աշխատող մի ուրիշ կամավոր նախաձեռնել է ծխախոտի չարացման ծրագիր՝ Գյումրիում կամավորներն ավելի քան 50 տարեց անձանց օգնել են սկսելու իրենց բիզնեսը տիկնոջմի արտադրության, բոլի մշակման եւ այլ բնագավառներում: Հայ FM ռադիոն ռադիոկայանը, որ լայն ժողովրդականություն ունի այսօր Հայաստանում, նույնպես ստեղծվել է Խաղաղության կորպուսի կամավորների օգնությամբ: Բիզնեսի խորհրդատուներ հայ սկսնակ գործարարներին

ԱՇԽԱՐՀ

Վրաստան. Ֆեոդոր Ռեուտը օգոստոսյան դավադրության մասնակի՞ց

ԹԲԻԼԻՍԻ, 15 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Վրաստանի անվտանգության ծառայության նախկին ղեկավար Իրակլի Բաշիաշվիլին շարունակում է պնդել, որ օգոստոսի 29-ի ահաբեկչական գործողության մասին տեղյակ են եղել եւ ակտիվորեն մասնակցել դրա իրականացմանը Անդրկովկասում ռուսական զորքերի հրամանատար Ֆեոդոր Ռեուտը եւ ՌԴ Գլխավոր շտաբի հետախուզական վարչության ներկայացուցիչ Մարուսինը: Բաշիաշվիլին համոզված է, որ նրանք նույնիսկ խորհրդակցություններ են անցկացրել որոշ քաղաքական ուժերի հետ, սակայն հանրաքվեության ղեկավարությունը չի կասեցրել այդ խափանարար գործողությունը:

Թայվանի ավիաընկերությունը հրաժարվում է ՉԺՀ-ի դրոշից

Թայվանը հրաժարվել է վերջին 36 տարիներին իր ավիաընկերության օդանավերը զարդարած ՉԺՀ-ի դրոշից՝ այն փոխարինելով սալորենու կարմրավարդագույն ծաղիկով: Դա Թայվանի ավիաընկերությանը թույլ կտա տարածել իր միջազգային ցանցը, շրջանցելով Պեկինի սպառնալիքների հետ կապված դժվարությունները. Մասնավորապես 1997 թ. Հոնկոնգի Չինաստանին վերադարձվելուց հետո ընկերությունը կկարողանա ուսումնասիրել Թայբեյ-Հոնկոնգ շահութաբեր երթուղին եւ հետագայում ուղիղ գծեր բացել մայրցամաքի հետ:

L'EXPRESS

«Առամ Սինհիկյոյի» հետեւորդները նոր էլեկտրոնային խաղում

Ճապոնիայում ստեղծվել է «Կասումիգասուեկի» անունը կրող նոր խաղ, որը մատչելի է միայն էլեկտրոնային ցանցում: Դա Տոկիոյի մետրոյի այն կայարանի անունն է, որտեղ այս տարվա մարտի 20-ին «Առամ Սինհիկյո» աղանդի ներկայացուցիչները թունավորել էին հազարավոր մարդկանց: Խաղացողների նպատակն է ազատել հնարավորին չափ շատ մարդ: Թեեւ խաղի հեղինակի անունը չի նշվում, հիշյալ աղանդի ղեկավարների շարունակվող դատավարության ժամանակաշրջանում նման խաղի ստեղծումը չար կատակի տպավորություն է թողնում:

L'EXPRESS

ԳԱՍՏՈՆ

Ժան Կրետիենի հոգսերը չեն նվազել

Նման աղյուսից շատերն էին վախենում Կանադայում, հաղորդում է «Իրան Նյուզ» թերթը հենվելով Մոնրեալից ստացված տարբեր լուսանկարների վրա: Քվեբեկցի անջատողականների ղեկավարությունը ծայների այնպես չնչին խնայք էր կազմում, որ նրանք, ըստ դիտորդների դարձյալ կփորձեն հասնել անկախության: Ինչպես հայտնի է, Քվեբեկի 50,6 տոկոսը կանանց 49,6 տոկոս վաստակած անջատողականները, նստած իրենց կենտրոնատեղում, շատ շուտով հիասթափությունը փոխարինեցին լավատեսական բացականչություններով: «Մենք մի փոքր կորցրինք, բայց ոչ շատ երկար», հայտարարել է նրանց ղեկավար Ժակ Պարիզոն: «Այս անգամ մենք 15 տարի չենք սպասի», ավելացրել է նա ակնարկելով 1980 թվին անցկացված նախորդ քվեարկությունը, որի ընթացքում ձայների 60-40 տոկոսի հարաբերությամբ նրանք պարտություն էին կրել:

Ճիշտ է, Կանադայում ճգնաժամը կանխվեց, կառավարությունը չտապալվեց, փողը չարժեզրկվեց, բայց վարչապետ Ժան Կրետիենը հանդստանալու ոչ պատճառներ ունի: Նա նախորդներից ավելի ալալուրջ պիտի լինի, որպեսզի սահմանադրական բարեփոխումներ կատարի:

«Կարծում եմ, որ մարդիկ հայտնելով Կանադայի կազմում մնալու իրենց մտադրությունը, այնուամենայնիվ, ցանկանում են տեսնել մի նոր սահմանադրություն», ասում է Իզաբել Սենֆորթենը: «Մենք ավելին ենք ուզում, քան այն, ինչ մինչ այժմ կանադան տվել է մեզ: Ժան Կրետիենն այնքան էլ մեծ հնարավորություններ չունի ընտրություն կատարելու»: Ոմանք Ֆերգասոնը՝ Իլուրանոցի մի աբխազակից, համաձայնում է ընկերուհու հետ, ավելացնելով. «Մենք անելանելի դրության առաջ ենք կանգնած: Փոփոխությունը դարձյալ անհրաժեշտություն է»:

Ինչպիսի բարեփոխումներ կատարվելու վարչապետը, եւ արդյոք դրանք ընդունելի կլինեն, ցույց կտա ապագան:

«ԱՐ-ԱՐ-ԱՏ» ավիաուղիներ

Պետական դուստր ձեռնարկությունը ՅԱԿ-40 ինքնաթիռներով կատարում է ուղեւորների եւ բեռների փոխադրում՝ բեռների փոխադրումը մատչելի գներով: Հուսալի մարդկանց համար կան բիզնես կարգի տեղեր կահավորված ինքնաթիռներ:

ԵՐԵՎԱՆ-ՍՏԱՓՐՈՊՈԼ
ԵՐԵՎԱՆ-ՆԱԽՃԻՎԱՆ-ՍԱՅԿՈՎ
ԵՐԵՎԱՆ-ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ
ԵՐԵՎԱՆ-ՎՈԼԳՈԳՐԱԴ
ԵՐԵՎԱՆ-ՍՈՉԻ
ԵՐԵՎԱՆ-ՄԻՆՍԿՈՎԻ

Հանրապետության տարածքում ԱԻ-8 ուղղաթիռներով առաջարկվում են հետեւյալ ծառայությունները՝

- ուղեւորների եւ բեռների տեղափոխում
- բնակչության բժշկական սպասարկում
- զբոսաշրջիկների, բարձր լարման եւ կապի գծերի, դեսերի ջրանցքների եւ ավտոմայրուղիների դիտակային հսկողություն
- Մոնիտորինգների կազմակերպման աշխատանքներ:

Թռիչքները կատարվում են «Հեթանոս» օդանավակայանից: Տեղեկությունների համար զանգահարել 48-03-51, 48-47-61

ԵՐԵՎԱՆ ՄԻՆՎՈՒ բոլոր չվերթները «Չվարթնոց» օդանավակայանից տեղափոխվել են «Հեթանոս» օդանավակայան

ՏՐՅԱՆ

«Մասային միությունը նպաստավոր է երկուսին»

«Եվրամիության եւ Թուրքիայի միջեւ մասային միության կնքումը օգուտ է բերելու երկու կողմերին էլ», ասել է ԱՆ կառայում եվրոդական հանձնախմբի ներկայացուցչության պետ Մայլ Հեյլը: Ըստ եվրահամայնքի տեղեկագրի միջազգային հարցերի արհայական ինստիտուտում ելույթ ունենալով նա նշել է, որ եվրամիության արտահանողները օգտվելու են ներմուծման վրա դրված հարկերի վերացումից, որոնք հասնում են տարեկան 1,5 միլիարդ դոլարի, իսկ Թուրքիան ձեռք է բերելու հավելյալ տնտեսական եւ քաղաքական աղահովություն: Լեյլը նաեւ ավելացրել է, որ մասային միությունը կարող է զարկ տալ Թուրքիայում իրականացվող մարդու իրավունքների բարելավումներին:

Սաուդյան Արաբիան օտարերկրյա աշխատակիցներին ազատում է աշխատանքից

Ինչպես գրում է իրանական «Էթելաաթ» օրաթերթը, Սաուդյան Արաբիան որոշել է մինչեւ 2000 թ. օտարերկրացիներին ազատել զբաղեցրած պաշտոններից, փոխարինելով տեղացիներով: Արաբ մի տնտեսագետի խոսքերով հնգամյա նախագիծ պետական մարմինները նպատակ ունեն 1995 թ. մինչեւ 2000 թ. բոլոր պաշտոններն ազգայնացնել, այսինքն պետական հիմնարկներում աշխատատեղերը հանձնել բնիկներին: Իսկ որոշ բնագավառներում, ինչպիսիք օդագնացությունն ու հատուկական աղահովությունն են, պետք է անձնակազմը փոխվի անմիջապես: Արաբական «Ալ Էխբեսաղիյէ» (Տնտեսագիտություն) օրաթերթը գրում է, որ կառավարության որոշման համաձայն, մինչեւ 2000 թ. մոտավորապես 600 հազար արտասահմանցիներ պետք է հեռացվեն աշխատանքից: «Էթելաաթը» նշում է, որ արաբական երկրներում, հատկապես Սաուդյան Արաբիայում եւ Քուվեյթում մասնագիտական պաշտոնների մեծ մասը զբաղեցնում են ամերիկացիները եւ եվրոպացիները, իսկ բանվորական ուժը՝ Ֆիլիպինցիներն ու պակիստանցիները:

Տաջիկստանում բացվեց առաջին իրանական դպրոցը

Հոկտեմբերի վերջերին Դուշանբեում բացվեց առաջին իրանական դպրոցը: Ինչպես հայտնում է «Էթելաաթ» իրանական օրաթերթը, դպրոցն առայժմ ունի 15 իրանցի աշակերտ, որոնք մինչ այդ սովորած հաճախում էին տեղի դպրոցներ կամ սովորում էին տնային պայմաններում: Դպրոցի բացման արարողությանը Իրանի դեսպանը հույս հայտնեց, որ ապագա տարիներին այն կհամալրվի նաեւ տաջիկ աշակերտներով: «Էթելաաթը» նշում է, որ չնայած տաջիկ ժողովրդի հետ լեզվական ու մշակութային տարբերությունը, ներկայումս Թուրքիան այնտեղ հիմնել է հինգ գիշերօթիկ դպրոց, որոնցում սովորում են մոտ 1000 հոգի: Տաջիկստանի իրանալեզու ժողովուրդը շահագրգռվածություն է ցուցաբերել իրենց երեխաներին իրանական դպրոցում ուսման տալու հարցում:

Ս. Գ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մի չբացված ցուցահանդեսի պատմություն

Քաղաքական նկատառումնե՞ր, թե՞ ուրիշ մի բան. Փորձում ենք ճշտել

«Ազգի» երգիծանկարիչ TOTO-ի նախաձեռնությամբ հայտարարված ցուցահանդեսն երեկ, արդեն երկրորդ անգամ չկայացավ: Նախորդի հետաձգման համար հայցել էինք արվեստաբերների ներողամտությունը, այսօր դրա կարիքը չկա, որովհետև մեր դատմությունը ոչ միայն ինչ-որ ցուցահանդեսի 2 անգամ ինչ-ինչ պատճառներով չկայանալու մասին է, այլ կարծում ենք, առավել մտահոգիչ:

Դեռևս հոկտեմբերի 26-ից «Ազգը» տեղեկացնում էր, որ հոկտեմբերի 28-ին, ժամը 12-ին, Կամերային թատրոնի Fe դատկերասրահում բացվելու է TOTO-ի (Սուքիաս Թորոսյան) ցուցահանդեսը: Նախապես դատմանավարժությունն կար թե թատրոնի գլխավոր ռեժիսոր Ս. Ստեփանյանի, թե ցուցահանդեսների կազմակերդիչ Ժենյա Պողոսովայի հետ: Ցուցահանդեսն ուղեկցվելու էր տոմսերակալությամբ, որի գաղափարն ուրախացրեց տանտերերին: Նրանք էլ առաջարկեցին TOTO-ի ցուցահանդեսով բացել Կամերայինի թատերաշրջանը: Բայց ցուցահանդեսի բացումից մեկ օր առաջ Սուքիաս Թորոսյանին նույն մարդիկ ծանուցեցին, որ նոսլատված օրը դիտի բացվի մեկ ուրիշ նկարչի: Արմեն Խաչատրյանի ցուցահանդեսը: Մեր հարցմանն ի դատասխան դարոն Ստեփանյանն ասաց, թե անակնկալ խաչաձևումն է դատճառը: «Ինչկա որ, Ձեր ցուցահանդեսը կարող է կայանալ շաբաթներ հետո»: Բայց նախորդ օրը TOTO-ն նույն բարեհաճ դատասխանը չէր ստացել. «TOTO-ն այստեղ չի ցուցադրվի եւ վերջ», ասել էր Կամերայինի գլխավոր ռեժիսորը: Հոկտեմբերի 28-ին Fe-ում բացված ցուցահանդեսի մասին Սնարֆ գործակալության մեջ տրամադրած լուրի մեջ մի նախադատություն ստիպեց մոր անկյուն փնտրել. «Ցուցահանդեսը Արմեն Խաչատրյանի համար անակնկալ էր եւ ընկերներին չմերժելով համաձայնեց ներկայացնել իր արվեստը»: Մոտավորապես այսպես ձեւակերդված միտքը ստիպեց անտարբեր չմնալ: Նկարչի հետ զրույցից դարզվեց, որ անակնկալ խաչաձեւման մասին խոսք լինել չէր կարող, քանի որ ինքը մի օր առաջ է իմացել, որ ցասող ցուցահանդես դիտի բացի: Ինչեւէ, չփորփրենք առաջին ցուցահանդեսի դատմությունը, մանավանդ երկրորդն էլ ադհաս չէ դատմելու նյութից: Նոյեմբերի սկզբին «Ազգը» դիմում է Մաշտոց 48 հասցեում տեղավորված «Արար» բատերական հրատարակչական համալիրի հեղինակ Գեորգի Վանյանին՝ երգիծանկարի ցուցահանդես բացելու խնդրանքով: «Արարը» իր կազմակերդած «Հոպանցիկ բատրոն» շարքում բնդգրկում է TOTO-ի ցուցահանդես-տոմս: Բայց նորից նույն դատմությունը մի օր առաջ կասեցվում է ցուցահանդեսը այս անգամ «Թատրոն» հիմնադրամի նախագահ Լեոն Թոխիկյանի միջամտությամբ: Նախորդ գիշեր նա փնտրում է իր սենյակում աննսլատեղ հնարավորություն տալով լրագրողներին, ցուցահանդես եկած արվեստասերներին տեսնել TOTO-ի երգիծանկարների մի մասը սենյակի վանդակապատ դատուհանից: Պատճա՞ռը: Պարոն Թոխիկյանն ասաց, թե «իր վրայով անցել են», եւ որ ինքն ընդհանրապես տեղյակ չի լինում իր սենյակում ցասվող դեպքերից: Ինչ է կատարվում: TOTO-ի տաղանդը հարգում է, բայց ցուցահանդեսը չի կայանա, որովհետև ինքը «ոչ «Արար» է ճանաչում, ոչ «Արվեստ» ցուցասրահ»: Բառերից, անուններից, հարեւաններից նեղացած լինելը դի դեղ ազդագրի, հրավիրատոմսի վրա տրված է նաեւ «Թատրոն» հիմնադրամ անունը) իրավունք տալի՞ս է արդեն ճանաչված, «հանրագիտարան մտած հեղինակությանը» փակել մեկ ուրիշ արվեստագետի ճանապարհ:

Այնուամենայնիվ, Մաշտոց 48-ը երեկ բավականաչափ հետաքրքիր դիմավորեց երգիծանկարի երկրպագուներին: Սուքիաս Թորոսյանը դատասխանելով լրագրողների «Ինչո՞ւ երկրորդ անգամ չկայացավ» հարցին, ասաց. «Մեղավոր եմ բոլորս. երեւի թե երգիծանկարչությունը որդես արվեստ չի կայացել Հայաստանում: Երբ Հայաստանում լուրջ վերաբերվեին, ցուցահանդեսն այս ճակատագիրը չէր ունենա: Ես չեմ հանձնվում, կփորձեմ այլ տահում բացել իմ ցուցահանդեսը»:

Բոլոր արվեստասերներին, TOTO-ի դիտրկ գրչի երկրդագուներին հայտնենք, որ «Ազգը» շարունակելու է դարբերաբար տեղեկացնել TOTO-ի երդդ, չորրդ, հինգերդդ... բացվելիք ցուցահանդեսների մասին:

Մեկ, երկու, երեք, չորս... երգիծանքը հարատեւում է նոր նյութերով:

ԱՆԱՀԻՏ ՏՈՒԱՆՓՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Մայքլ Աղլենը եւ կինոն

Նոյեմբերի 16-ին լրանում է անգլուա մերիկյան գրականության հայոդրի մշակ Մայքլ Աղլենի (Տիգրան Գույումճյան, 1895-1956) ծննդյան 100-ամյակը: Ժամանակին նա միլիոնավոր ընթերցողների սիրելին էր, բեսբսելեր էին դարձել նրա վեդերից շատերը: Այսօր նրա ուշագրավ, ինչ-որ տեղ հակասական նկարագիրը հետաքրքիր է հատկապես մեզ՝ հայերիս համար, որդես օտարագիր հայազգի գրողի մի ինքնատիդ երեւույթի: Ծնված լինելով Բուլդարիայի Ռուսե քաղաքում եւ վաղ տարիքից ադրելով Անգլիայում՝ Աղլենը հիմնովին յուրացրել է արեւմտյան քաղաքակրթությունն ու մտածողությունը եւ երկից երկ քայլ առ քայլ հեռացել իր ազգային նկարագրից: Սակայն ժամանակ առ ժամանակ գրվածքներում հիշատակել է իր հայկական ծագումը, երբեմն՝ սիրով, երբեմն՝ դառնությամբ խոսել հայ ժողովրդի մասին: Մեզ համար խիստ զարմանալի էր, երբ ամերիկյան նշանավոր «Հալիուելի կինոուղեցույցում» անծանուններն հատորի վերջին հրատարակության մեջ Աղլենը հիշվում է որդես «հայ վիդասան», եւ նրանից մեջբերվում է հետեւյալ խոսքը. «Իմ նախնիները հաջորդաբես մեջի ծուած բանում էին՝ ադրելով Արարատ լեռան լանջերին»...

Իր փառքի առաջին իսկ տարիներին Մայքլ Աղլենն իր վրա է սեւեռել թատրոնի եւ կինոյի աշխարհի ուշադրությունը: Նրա միջազգային ճանաչումը կադվում է 1924-ին «Կանաչ գլխարկ» վեդի լույսընծայման հետ, որտեղ դատկերված են բրիտանական բարձրաշխարհիկ անծանց բարքերը, Այրիս Սբորմի սիրո եւ անկման դատմությունը: 1925-ին Նյու Յորքի Բրոդհըրսթ թատրոնում ներկայացվում է «Կանաչ գլխարկը»՝ ամերիկյան թատրոնի թագուհու՝ մեծանուն դերասանուհի Քեթրին Քորնելի գլխավոր դերակատարմամբ: Նրա խաղընկերներն էին նույնդես անվանի արտիստներ Լեսլի Հոուարդը եւ Մարգալո Գիլմորը: Թատրոնում Այրիսին հաջողությամբ մարմնավորում են նաեւ բեմի եւ էկրանի հանրահայտ աստղեր Թալուլա Բանհիդը եւ Փոլա Նեգրին: Ի դեդ, վերջինս այն միտքն է հայտնել, որ Մայքլ Աղլենն Անգլիայի գեղեցկագույն տղամարդն է: Եվ մամուլը շատդել է ենթադրել, որ անհավանական չէ Փոլայի եւ Աղլենի ամուսնությունը: Ճիշտ է, Նեգրին իր «Աստղի հիշատակարանը» հուշագրության մեջ հիշում է հայազգի գրողին (որը մի զրույցի ժամանակ հիացմունքով է արտահայտվել Փոլայի ընկերոջ՝ կինոաստղ Ռուդոլֆո Վալենտինոյի վերաբերյալ), սակայն հիշատակություն չկա նրանց հնարավոր ամուսնության մասին: Հետաքրքիր է, որ սիրային դատմության առաստղել է հյուսվել նաեւ Աղլենի եւ Այրիսի կինոհերոսուհու՝ մեծն Գրետա Գարբոյի անվան շուրջ: 1928-ին բեմադրիչ Բլաստեն Բրաունը Թեթ Մերեդիթի սցենարով նկարահանեց «Woman of Affairs» կինոնկարը (ըստ «Կանաչ գլխարկի»), որտեղ Գարբոյին ընկերակցում էր հոլիվուդյան հանրաճանաչ դերասան Դուգլաս Ֆերբենկս կրտսերը: Կինոդետ Բոսլի Քրաուբրի գնահատմամբ, այդ ֆիլմում «Գրետան մեկ անգամ եւս անկում ադրած կնոջ դեր խաղալու ճանապարհին էր: Նա իրագործեց այն ստոիկաբար»: Իսկ ահա ինչ դրվագ է նեել ռուս կինոդետ Կարցեւան Ամերիկայում ֆիլմի ցուցադրության առիթով. «Մերիլենդ նահանգում... Ֆիլմից կտրվել է ադ տեսարանը, որտեղ հերոսուհին մահից հանում եւ հասակին է գցում ամուսնական մահանին (չնայած այդ դրվագը եղել է գրական սկզբնադբյուրում՝ Մայքլ Աղլենի ԱՄՆ-ում բավական հայտնի «Կանաչ գլխարկ» վեդում)» (տես նրա «Թողարկված է հոլիվուդում» գիրքը, էջ 29-30):

Հնչուն կինոն արագ «վերհիշեց» Աղլենի ամենահայտնի երկը, եւ առաջին էկրանավորումից 7 տարի անց բեմադրիչ Ռոբերտ Զ. Լեոնարդը կյանքի կոչեց «Հալածված լեդին» նոր կինոտարբերակը, որտեղ գլխավոր հերոսներին մարմնավորեցին Կոնստանս Բենեթը եւ Հյու Ուիլյամսը: Հետագայում «Կանաչ գլխարկն» էկրանավորելու մտադրություն են ունեցել Իրվինգ Թալբերգը եւ կինոաստղ Ավա Գարդները, սակայն դրանք մնացել են չիրականացված:

Կինոբեմադրիչներից Աղլենի ստեղծագործություններին հետագայում անդրադարձել են բեմադրիչներ Իրվինգ Բիյսը («Բագեն տեղափոխում է», 1942), Ալեքսանդր Հալը («Աստվածային մարմին», 1943, դերերում՝ Ռիկյան Փաուել, Հեդի Լամար, Ջեյմս Բրեյգ), Մարիո Զամոին («Ճակատագրական գիշերը», 1948, ըստ «Ջենքլ մենն Ամերիկայից» դատմվածքի), ինչդես նաեւ էկրանավորվել են նրա «Հափշտակված բագը», «Թոչող հոլանդացին», «Լիլի Քրիսթի», «Փոդոցների ասդեսը», «Ինչ զվարճալի ֆրանսիացի» (գլխավոր դերում՝ Ուոլթր Հաֆեթ) եւ ուրիշ ստեղծագործություններ: Սակայն հիմնականում առեւտրական, մոդայիկ շարժադատկերներ էին, որոնք գրեթե հետք չեն թողել ամերիկյան կինոարվեստում: Ի դեդ, մեծահռչակ բեմադրիչ Ալֆրեդ Հիչկոքը որդես հեռուստաֆիլմ նկարահանել է Աղլենի «Ջենքլմենն Ամերիկայից» գործը (դերերում՝ Բիլ Մեգուայր եւ Ռալֆ Բլինքոն), որը մտադիր է եղել նկարահանել նաեւ որդես լայնէկրան ֆիլմ: Մայքլ Աղլենը մտերիմ հարաբերությունների մեջ է եղել Չարլզ Չաբլինի, Բլարֆ Գեյբլի եւ հայտնի այլ կինոգործիչների հետ:

Մայքլ Աղլենի կինոարվեստի հետ վերջին առնչությունը վերաբերում է 1992 թվականին, երբ բուլդարահայ «Երեւան» բերքը գրեց, որ բուլդար կինեմատոգրաֆիստները ֆիլմաշար են ստեղծում Ռուսեում ծնված ականավոր անձանց մասին, եւ կինոնկարներից մեկն էլ նվիրվում է Մայքլ Աղլենին:

ԱՐԾՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Արսեն Մանասարյանի երգարվեստն արժանացել է ջերմ ընդունելության

«Նոյյան տաղան» գործակալության թղթակից Վահե Քաբեքը Ավստրալիայից հաղորդում է, որ ամուսնանալուց եւ Սիդնեյում հաստատվելուց հետո հայ երգչուհի Արսեն Մանասարյանը մեծ հաջողություններ է հասել ավստրալիական բեմերում: Նրա ելույթները Սիդնեյում, Մելբուռնում, Կանբերայում եւ բազմաթիվ այլ քաղաքներում մեծ հետաքրքրություն են առաջացրել Ավստրալիայի երաժշտական հասարակայնության շրջանում:

ՆՈՅՅԱՆ ՏԱՂԱՆ

«Ակունքը» նորից բեմում է

Նոյեմբերի 14-ին Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Ակունք» խմբի համերգը նվիրված հայ երգի երախտավոր Մարո Մուրադյանին: Նույնը ունեցան «Ակունքի» մենակատարներ Հասմիկ Հարությունյանը (երգ), Գեորգ Դաբաղյանը (դուդուկ), Ալեքսան Հարությունյանը (երգ), նվագակցողներ Գրիգոր Թադուշյանը եւ Կամո Խաչատրյանը: Սա մենակատարների երրորդ ելույթն էր Կամերային երաժշտության տանը: Հնչեցին դատմական Հայաստանի տարբեր շրջանների ժողովրդական, գուսանական-աշուղական երգեր ու նվագներ: Համերգը կայացավ: Վերջում լեփ-լեցուն դահլիճում թնդաց ավանդական Քոչարին, իսկ «Հրաշք» դատարախումբը (Հասմիկ Հարությունյանի սաներ) իր ելույթով ջերմացրեց մթնոլորտը:

«Ակունքը» ձեւավորվել է 70-ական թվականներին. ԳԱԱ լեզվի ինստիտուտում: Հետո հրավերներ ադիո, հեռուստատեսություն, եւ Մարո Մուրադյանին եւ Հայրիկ Մուրադյանների շնորհիվ ստեղծվեց ժողովրդական երգի, դարի հրաշալի խումբը:

Վերջին շրջանում «Ակունքը» լրիվ կազմով ելույթ չի ունեցել: Հայտնի էր, որ խումբը գրվել է: Կամերային երաժշտության տանը կայացած այս համերգը «Ակունքի» զարթոնքի մասին չի՞ հուշում: Այս հարցի շուրջ զրուցեցի խմբի դուդուկահար Գեորգ Դաբաղյանի հետ: «Չեմ ընդունում, որ «Ակունքը» կազմալուծվել է: Մարո Մուրադյանի մահից հետո անցումային շրջան սկսվեց, խմբում հիասթափություն առաջացավ կադված որոշ դժվարությունների հետ: Առջեւում ձայնագրություններ մեծ ծրագիր կա: Մարո Մուրադյանի դդրոցը մեզ զգալ տվորեցրեց հայ ժողովրդական երգի շունչն ու ոգին»: Հիմա «Ակունքի» դեկավարը Հարություն Փանոսյանն է, խմբավարը Ալեքսան Հարությունյանը:

ՆԱԻԲԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԴՅԱԼԻՍ

Բացվել է Փարաջանովի ցուցահանդեսը՝

Իտալացի խոշորագույն կինոռեժիսոր եւ սցենարիստ Պաոլո Պազոլինիի մահվան 20-ամյակի առթիվ Իտալիայում անց կացվող միջոցառումների շրջանակներում Հռոմի «Պալացիո էսդրոդիցիոն» տահում վերջերս բացվեց Սերգեյ Փարաջանովի աշխատանքների ցուցահանդես: Իտալական «Պաոլո Պազոլինի» անվան հիմնադրամի հրավերով Երեւանի Փարաջանով բանգարանը առաջին անգամ Իտալիա է տարել ավելի քան 60 կոլաժներ: Ցուցադրվող աշխատանքների թվում են իտալացի ռեժիսորին նվիրված գործեր: Ցուցահանդեսը կգործի մինչեւ դեկտեմբերի 3-ը:

ԼՏ

«ԼԻԼԻ-ԼՅՈՒՔՍ»
գեղեցկության սրահը
ոչ միայն խոստանում է Ձեզ գեղեցկացնել, այլեւ ձեզ կսովորեցնի դրա ձեւը:
Ձեզ ընձեռվում է եզակի հնարավորություն փորձելու ամերիկյան «Մերի Քեյ Կոսմետիքս» ֆիրմայի բարձրորակ արտադրանքները եւ դրանց բազմազանության մեջ գտնելու անհրաժեշտ ամեն ինչ. որոնցի երիտասարդ եւ գրավիչ լինեք դեռ շատ տարիներ:
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ:
Բարձրակարգ ոճավորողներ եւ գեղահարդարներ
ՎԱՐՍԱՎԵԻՐ ՄԱԿԻՖԱԺ ՄԱՆԻԿՅՈՒՐ ՄԵԲՈՒՄ
ԳԵՂԱՀԱՐԴԱՐ ԷՊԻԼՅԱՑԻԱ ՊԵԴԻԿՅՈՒՐ
Դամ գեղեցիկ եք, բայց կարող եք դառնալ անզուգական:
Մեր հասցեն. Հանրապետության 79
(նախկին Ալավերդյան, բիվ 114 դդրոցի մոտ)
Հեռախոս 56-32-57

digitised by A.R.A.R.@

ԱՀԿ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

ՖԻՖԱ-ի կոնգրեսը Վանիկ Զաքարյանի եւ Գագիկ Հովհաննիսյանի մասնակցությամբ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.

Փարիզում նոյեմբերի 18-ից մինչեւ 26-ը անցկացվելու է ՖԻՖԱ-ի 66-րդ կոնգրեսը, որին կմասնակցեն նաեւ ՀՀ շախմատային ֆեդերացիայի նախագահ, երեւանյան համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Վանիկ Զաքարյանը եւ ՖԻՖԱ-ի եվրոպական 5-րդ գոտու նախագահ ու Համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտեի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանը:

Մեր դասվիրակները հանդես կգան համաշխարհային օլիմպիադայի (1996-ի 12 սեպտեմբեր-2 հոկտեմբեր), ՖԻՖԱ-ի հաջորդ կոնգրեսի եւ շախմատի տղամարդկանց աշխարհի առաջնության երեւանյան փուլերի մրցաշարի (1996-ի 27 դեկտեմբեր-12 մայիս) նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին հաղորդումով: Փարիզում բազմաթիվ հարցերի հետ կքննարկվեն նաեւ ՖԻՖԱ-ի վարկածով աշխարհի առաջնության Կարպով-Կասպարովի եզրափակիչ մրցախաղի, Պրոֆեսիոնալ շախմատային ասոցիացիայի (ՊՇԱ) եւ ՖԻՖԱ-ի միավորման հետ կապված խնդիրներ: Կոնգրեսում կհաստատվեն Երեւանում կայանալիք համաշխարհային օլիմպիադայի եւ աշխարհի առաջնության միջին ջային մրցաշարի գլխավոր մրցավարներ: Ավանդաբար նոր կոչումներ կշնորհվեն շախմատիստներին:

Գլխավոր ասամբլեային կնախորդեն ՖԻՖԱ-ի հանձնաժողովների նիստեր: Ինչպես մեր թերթն արդեն գրել է, Վանիկ Զաքարյանը եւ Գագիկ Հովհաննիսյանը վերջերս ընտրվել են շախմատի միջազգային ֆեդերացիայի գլխավոր հանձնաժողովների անդամներ: Սպասվում է, որ կոնգրեսում ՖԻՖԱ-ի նախագահ, Ֆիլիպինցի Ֆլորենսիո Կամպոմանեսի կողմնակիցների եւ նրա հակառակորդների միջեւ սուր բանավեճեր կծավալվեն շախմատային աշխարհի կարեւորագույն հարցերի շուրջ: Երեւանյան միջին ջային մրցաշարի կազմը մեծապես կախված է ՖԻՖԱ-ի եւ ՊՇԱ-ի միավորման հարցից եւ հավանաբար այն վերջնականապես ճշտվի կոնգրեսում:

Ինչպես միշտ, Գագիկ Հովհաննիսյանը, որը միաժամանակ մեր թերթի շախմատային մենկնաբանն է, կվարձի կոնգրեսից բարձր տեղեկատվություններ հաղորդել շախմատասերների հսկա բանակին:

ԱՍՏՂԵՐ

Իրինա Պրիվալովա. Ռուսաստանի նոր «կայսրուհին»

ԳԵՎՈՐԳ ԱՍԻԲՅԱՆ.

Վարանս, Ֆրանսիա

Նրա միայն մարզադաշտ մտնելը ոտի է հանում տղերքի բազմահազար սիրահարների, ինչպես նախկինում դա լինում էր, երբ ասդարեզ էր դուրս գալիս գերմանուհի Կաստրինա Կոբ-

բին: Ռուսաստանի նոր «կայսրուհին» Իրինա Պրիվալովան տղերքի մի ջազգային առաջարկ առաջին անգամ մուտք գործեց 1990 թ. Սոչիում (Հատկությունները) տեղի ունեցած մրցաշարում: Այն ժամանակ Պրիվալովան կրում էր Սերգեեւա ազգանունը: «Ամուսնացա 18 տարեկանում: 19-ում մայր դարձա, 29 տարեկանում ամուսնալուծվեցի», ասում է Պրիվալովան:

Այսօր Կաստրինա Կոբբին հուզ է դարձել եւ տառապում է արգելված դեղամիջոցներ օգտագործելու մի շարք խնդիրներով, իսկ Պրիվալովան եվրոպական տղերքում անդարձելի է դարձել եւ հեշտությամբ հաղթում է 100 m 200 մետր վազքատարածություններում: Սակայն համաշխարհային ասպարեզում նրա ճանապարհին կանգնել են ամերիկացիներ Գեյլ Դիվերսն ու Գվեն Տորենսը եւ Ջամայկայից սեռամորֆ գեղեցկուհի Մարլեն Օտտին: Բայց Պրիվալովան ոգում է աշխարհում էլ առաջիկա լինել: 26 տարեկանում Իրինա Պրիվալովան իր մարդիկ Վլադիմիր Պարաշչուկի հովանու տակ, որը հինգ Իրինայի ամուսին է, հասավ իր ամենամեծ հաջողությունը եւ հաղթեց Եվրոպայի առաջնությունում: Պորտանդում (ԱՄՆ) տեղի հիվ էլեկտրոնային մի սարքավորման արձանագրվեցին Պրիվալովայի վազքի տեխնիկայի բոլոր մանրամասները: Դրա մանրակրկիտ հետազոտությունները օգնեցին բացահայտել անհայտ բերաբերումներ: Պրիվալովան գնալով հակեց վազքի իր տեխնիկան: Նա սիրում է հարթել եւ Վլադիմիր Պարաշչուկի հետ ոգում է Ատլանտայի օլիմպիական խաղերում կրկնել Լյուդմիլա Կոնդրաշովայի հաջողությունը, որը դարձ առաջին եւ առայժմ միակ առաջավորդուհին է, որ օլիմպիական խաղերի ռեկորդ մեկ դարակրկին է 1980 թ. Մոսկվա:

Թայսոնն ոգում է ամուսնանալ

«Կռվելն իմ միակ նոպատակը չէ: Ուզում եմ նոր բնակարան ստեղծել, որի մասնակիցները, տղայ, կմնա բոնքամարտը», հայտարարեց դրդեմայնոյ բոքսիամարտի գեղեցիկ հաշվի աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնը: Ըստ Թայսոնի, իմի հիմա էլ աշխարհի ուժեղագույն բոքսիամարտիկն է եւ վստահ է, որ կիսաքի լեգենդարծած 44 տարեկան Էվանդեր Հոլիֆիլդին: «Ես նախանձում եմ նրան: Նա ունի այն ամենը, ինչ ես ցանկանում եմ: Նրա կեղծիքը մարտի ժամանակ գրավիչ է, բայց ես նրան կիսաքեմ», ասաց Թայսոնը: Աշխարհի նախկին չեմպիոնը հերթեց ամերիկացի մի լրագրողի տարածած այն լուրը, որ իբր Թայսոնը հայտարարել է, թե ոգում է հաստատվել Աֆրիկայում, սպիտակամորքների ազդեցությունից ազատվելու համար: «Դա զրպարտություն է: Ես հայտարարել եմ, որ ոգում եմ տեսնել Աֆրիկայի բարդերը եւ նեղն Աֆրիկայի գեղեցիկները, բայց երբեք չեմ կարող ապրել Աֆրիկայում:

Նույնիսկ բանտում գտնվելու ժամանակ իմ վիճակը շատ շատերի համար նախանձելի էր: Երբեմն ես Աֆրիկայում լինեի, վաղուց գլխապատված կլինեի», ավելացրեց Մայք Թայսոնը:

ԼՈՒՐԵՐԻ ՀՈՍՔ

Ֆուտբոլիստը ավտոքարի զոհ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում Արմենարեսի բոքսիկցի հաղորդեցին, որ, ըստ Թբիլիսիից ստացված հաղորդման, Զուգդիդի-Բուբայիս ավտոմայրուղում, ավտոքարի հետեւանքով զոհվել է «Դինամո» քիմի 21 մայա հարձակվող Զվիադ Քածանայան: Նրա հետ «Ֆորդ-սոռվիո» ավտոմեքենայում էր գտնվում նաեւ Սամսրեդիա խաղի հանուն քիմի 24 մայա ֆուտբոլիստ Բաղրի Դարասելիան, որը ծանր վնաս վածքներով հասցվել է հիվանդանոց: Ավտոքարի զոհ է դարձել նաեւ նրա աղջգա կինը, որի հետ Դարասելիան այդ օրը պետք է ամուսնանար: Հայաստանի մարզասերները լավ են հիշում նույն ազգանունը կրող մեկ այլ ֆուտբոլիստի՝ Թբիլիսիի «Դինամոյի» եւ նախկին ԽՍՀՄ հավաքականի կնամարտաշան Վիտալի Դարասելիային, որը նույնպես ավտոքարի զոհ է դարձել սեփական ավտոմեքենան վարելու ժամանակ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ավելանժը հրաժարվելո՞ւ է

Ամերիկյան «Ասոշիեյթդ պրես» գործակալությունը հաղորդել է, որ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) նախագահ Ժոաո Ավելանժը (Բրազիլիա) պատրաստվում է հայտարարել է, որ 1998 թվականին կայանալիք ՖԻՖԱ-ի համաժողովում վայր է դնելու իր լիազորությունները: Ըստ նույն աղբյուրի, այս հաղորդագրությունն այնքան ախորժ բանավեճ է առաջացրել մարզաշխարհում, որ Ավելանժի անձնական փաստաբանն այդ հայտարարությունը մեկնաբանելով, ասել է, որ ՖԻՖԱ-ի նախագահն անգգուշություն է թույլ տվել եւ պատրաստ է շարունակել իր գործունեությունը, եթե նրան խնդրեն մնալ այդ պատասխանում: Ժ. Ավելանժը 6 անգամ ընտրվել եւ վերընտրվել է ՖԻՖԱ-ի նախագահ ու արդարացիորեն համարվում է համաշխարհային սպորտի ամենաազդեցիկ անձանցից մեկը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Նախընտրում են «Մերսեդեսը»

Ըստ անգլիական մարզական մամուլի, մարզաշխարհում ամենահեղինակավոր ավտոմակնիշը գերմանական «Դայմլեր-Բենց» ավտոկոնցեռնի մաս կազմող «Մերսեդես-Բենց» ֆիրման է: Մարզածների միջազգային ֆեդերացիաների անդամների մեծամասնությունը նախընտրում է ունենալ այս մակնիշի ավտոմեքենա: Ավելացնենք, որ «Մերսեդեսը» մի ջազգային օլիմպիական կոմիտեի պաշտոնական ավտոմեքենան է: Այս ֆիրման նաեւ մի շարք ֆեդերացիաների գլխավոր հովանավորներից մեկն է: Ի դեպ, «Մերսեդեսը» նախընտրում են ոչ միայն մարզաշխարհում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Հայ մասնագետը հրավիրվեց ԱՄՆ

Միհայել Ղազարյանը, որը դայմանագրով հրավիրվել է «Վեր Փասադենա» ֆիրմայի կողմից, կդառնա մերոդական, հեծանվային խմբերի կազմավորման, ԱՄՆ-ի հեծանվային սպորտի ֆեդերացիայի հետ հարաբերությունների կարգավորման, Ատլանտայում եւ Բարի կամի խաղերում կազմակերպվելիք մրցումների հարցերի գծով խորհրդատու: Ղազարյանը որպես հեծանվորդների միջազգային միությունը միջազգային տեսուչ մասնակցել է բազմաթիվ խոշոր մրցումների կազմակերպմանն ու անցկացմանը, եղել է «Տուր դը Ֆրանս» կանանց բազմօրյա հեծանվավազքի գլխավոր մրցավար: «Պարմանագրային նոր աշխատանքը, որը նախատեսված է երեք տարվա համար, հնարավորություն կտա էլ ավելի խորանալ նաեւ Հայաստանում կազմակերպվելիք ճեղքայագուշյան մրցումների կազմակերպման հարցերում», Սնարի թղթակցին ասաց Ղազարյանը:

ՍՆՍԲԲ

ՀԱՄԱՌՈՏ

Հայ բոնցխամարտիկները կմասնակցեն միջազգային գերմրցաշարի

Դեկտեմբերի 13-18-ը Մոսկվայում անցկացվելու է Ռուսաստանի բոնցխամարտի 100 ամյակին նվիրված միջազգային խոշոր մրցաշար, որին մասնակցելու են Կուբայի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի մարզածեւի ներկայիս «աստղերը»: ՀՀ սպորտ վարչության բոնցխամարտի պետական մարզիչ Լեւոն Հովհաննիսյանը «Նոյյան տարան» գործակալության թղթակցին տեղեկացրել է, որ գերմրցաշարին մասնակցելու հրավեր են ստացել նաեւ կաբվե ձեռնոցի հայ վարպետները: Մոսկվայան մրցաշարին կմասնակցեն աշխարհի չեմպիոն, գավաթակիր Նշան Մուսչյանը, Լեոնիկ Պապյանը, Արթուր Միհայելյանը, Սերգեյ Հակոբյանն ու Սլավիկ Վանեսյանը, որոնք ներկայումս Ծաղկաձորում անցկացնում են իրենց ուսումնամարզական հավաքը:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

Իգոր Ներսիսյանը պատրաստվում է նոր լողանցման Ռիմից Թուրքիա

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության հաղորդման համաձայն, Յալթա քաղաքի բնակիչ, հայտնի լողորդ Իգոր Ներսիսյանը ծրագրում է նոր լողերք: Այս անգամ նրա նպատակն է հաղթահարել 250 կիլոմետր ջրային տարածք, որն անջատում է Ռիմը Թուրքիայի ափերից: Թեեւ այս մտադրությունն անիրագործելի է թվում, առավել եւս ձմռանը, Ի. Ներսիսյանը հավատում է, որ այն կիրականանա: Իգորն արդեն նման փորձ ունի. նա հաղթահարել է 50 կիլոմետրանոց տարածք Սեւանա լճում, «Արտեկ» հանրահայտ ճամբարից Լաստոչկինո գնեզդո (Ռիմի տեսարժան վայրերից մեկը) տանող 27 կիլոմետրանոց ջրային ուղին, եւ ընտրված է Սեւ ծովի ջրերի 6 ասիճան տաքությանը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Գրաֆը խուսափում է վերադառնալ Գերմանիա

Նյու Յորքում եւ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում զուգահեռաբար անցկացվում են բենիի տղամարդկանց եւ կանանց աշխարհի առաջնությունների ծրագրով մրցաշարեր, որոնք կազմակերպել է բենիի միջազգային ֆեդերացիան (ATP): Նյու Յորքում հանդես են գալիս կանայք, իսկ Ֆրանկֆուրտում տղամարդիկ: Երկու մրցաշարերին էլ մասնակցում են համաշխարհային դասակարգմամբ կանանց եւ տղամարդկանց 10 ուժեղագույններից 8-ը: Մասնավորապես տղամարդկանց մրցաշարում բացակայում է Անդրե Ագասին: Ընթացիկ մրցաշրջանում գերազանց հանդես եկող Փիթ Սամփրասն առավելության հասավ Ռուսաստանի ուժեղագույն բենիսիստ Կաֆելնիկովի նկատմամբ (6-3, 6-3), որը համաշխարհային դասակարգմամբ 6-րդ տեղում է: Սուպերի արգելքները հաջողությամբ հաղթահարեցին նաեւ Մայքլ Չանգը, Բորիս Բեկերը եւ Թոմ Էնֆվիստը:

Կանանց մրցաշարում նուլոնիս անակնկալներ չկան: Հաջորդ փոքր են դարձել Շտեֆի Գրաֆը, Արանտա Սանչեսը, Կոնչիտա Մարտինեսը եւ Գաբրիելա Սաբատինին: Կանանց բենիսի առաջատար Շտեֆի Գրաֆը, վաղուց է ինչ զբաղվում է ԱՄՆ-ում եւ խուսափում է վերադառնալ հայրենիք: Ըստ տեղի կարծիքի, դա դայմանավորված է Գերմանիայի իշխանությունների հետ հարկային հարցերում Գրաֆի ունեցած խնդիրներով:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՆԱԿԹ

Յուրի Շախրանիկ. «Ղարաբաղի» շահագործման պայմանագիրը Ռուսաստանի դիվանագիտության հաղթանակն է

Շաբաթ օր «Ազգը» հակիրճ հաղորդագրություն էր տվել այն մասին, որ նոյեմբերի 10-ին Բաքվում խոշոր պայմանագիր է ստորագրվել «Ղարաբաղ» հեռանկարային նավթային հանքատեղի վերաբերյալ և ստեղծվել է նոր նավթային կոնսորցիում ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իսպանիայի և Ադրբեջանի ընկերությունների մասնակցությամբ: «Ղարաբաղ» նավթային հանքատեղը գտնվում է Բաքվից 120 կմ հեռավորության վրա, Կասպից ծովի մայրցամաքային ծանծաղուտում: Հետո: «Ղարաբաղը» երկրաֆիզիկոսների կողմից հայտնաբերվել է դեռևս 1959 թվականին, սակայն մինչև այժմ աշխատանքներ համարյա չեն կատարվել: Այդ պատճառով էլ պայմանագրով 3 տարի է նախատեսվել հանքախուզական աշխատանքների անցկացման համար: Ստորագրված պայմանագրի ժամկետը 25 տարի է: Սպասվում է, որ մոտ 2 միլիարդ դոլարի ծախս դեպի է կատարել, մինչև որ սկսվի 80-ից 150 միլիոն տոննա նավթ պարունակող նավթահանքից նավթի արդյունահանումը: Ադրբեջանին, որպես պաշտպանների տիրոջ, դեպի է պատկանի եկամտաբեր նավթի մոտ 80 տոկոսը: Ադրբեջանի դեպքական նավթային ընկերության նախագահի խոսքերով երկրորդ նավթային պայմանագրի պայմանները կազմելիս ադրբեջանական կողմի շահերը ավելի շատ են հաշվի առնվել, քան առաջինի դեպքում: Այս պայմանագրում կոնսորցիումի արտասահմանյան մասնակիցների պարտավորությունները ճշգրիտ կերպով կանխորոշված են, և դրանց չկատարման դեպքում ադրբեջանական կողմն իրավունք ունի պայմանագիրը միակողմանի՞ կերպով չեղյալ հայտարարել: Պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ Ռուսաստանի Էներգետիկայի նախարար Յուրի Շախրանիկն ասել է, որ իր նախարարությունը, ինչպես և Ռուսաստանի կառավարությունը, հետագայում էլ կաջակցեն բոլոր այն ծրագրերին, որոնք կծառայեն Ադրբեջանի և Ռուսաստանի բարօրությանը: Պատասխանելով լրագրողների հարցերին, նա հայտարարել է, որ մոտակա ժամանակներում Ռուսաստանի տարածքով ադրբեջանական նավթի արտահանման համաձայնագիրը կստորագրվի կառավարական մակարդակով: Ադրբեջանական նավթը գոյություն ունեցող նավթամուղով Չեչնիայի տարածքով դեպի է հասի դեպի Տիխորեցկ, իսկ այնտեղից դեպի է կառուցվի նոր, 200 կիլոմետրանոց խողովակաշար մինչև Նովոռոսիյսկ նավահանգիստ: Մամլո ասուլիսի ժամանակ լրագրողներից մեկը կասկած է հայտնել Չեչնիայի տարածքով նավթի արտահանման հնարավորության վերաբերյալ: Ի պատասխան դրան Յուրի Շախրանիկն ասել է. «Նավթի արդյունահանումը Չեչնիայում այսօր դեռևս չի նախապատրաստված մակարդակի: Չեչենական հանրապետության տարածքում վերականգնված են բոլոր էներգետիկ օբյեկտները, նավթավերամշակման գործարաններում գործի են դրվել բոլոր սարքերը: Չեչնիայում արդյունահանվող նավթը Տուապսեով Նովոռոսիյսկ է արտահանվում»:

Նախարարը կարծիք է հայտնել, որ ադրբեջանական նավթի արտահանման երաշխիքները նույնպես կապահովվեն: Նա հայտարարել է, որ ստորագրված նոր գործարքը ռուսական դիվանագիտության լուրջ հաղթանակն է:

Յուրի Շախրանիկի ասածները ենթադրել են տալիս, որ Մոսկվան հույս ունի հետագայում էլ ամրապնդել իր դիրքերը: Չէ՞ որ հիմնական ադրբեջանական նավթի արտահանման ուղղությունը դեռ չի որոշվել, այդ հեռանկարը հետաձգվել է մոտ 30 ամսով: Անցյալ ամիս կայացված որոշումը վերաբերում է ադրբեջանական կառուցվածքային վերնաշերտային նավթի արտահանմանը միայն: Այն կիսով 2 ուղղություններով. հյուսիսային Ռուսաստանի տարածքով և արևմտյան Վրաստանի տարածքով մինչև սևծովյան Սուպսա գյուղամասը, իսկ այնտեղից խողովակաշարով, որը նոր դիտի կառուցվի, Թուրքիայի տարածքով մինչև Ջեյհան Միջերկրածովյան նավահանգիստը, որը գտնվում է Ադանայից արևելք: Իսկ ադրբեջանական նավթի հիմնական հանակությունը, ինչպես առաջին և երկրորդ նավթային կոնսորցիումների, այնպես էլ հետագայում ստեղծվելիք կոնսորցիումների խորհրդային նավթը, և, միգուցե, նաև Ղազախստանի նավթը դեպի է արտահանվի մի երրորդ, շատ ավելի մեծ թողունակություն ունեցող, ապագայում կառուցվելիք խողովակաշարով, որի ուղղությունը դեռևս չի որոշվել: Այդ որոշման հաստատումը, ինչպես ասվեց, հետաձգվել է 30 ամսով, և այդ ամիսներին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ապասվում է բեռ մրցակցություն: Գործի կողմից բոլոր խաղտվարները Չեչնիայի և Արխազիայի չլուծված հարցերը, քրդական հարցը և այլն: Յավոք սրտի, հնարավոր է, որ շահարկվի նաև Ղարաբաղի հիմնահարցը:

ՎԱՐՈՒԺԱՆ ԷԼՄԱԳ-ՏԵՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Վերջնական արդյունքներով՝ Էդուարդ Շեւարդնաձեն Վրաստանի նախագահ

ԹԲԻԼԻՍԻ, 15 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Նոյեմբերի 14-ին կայացած նիստում Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամփոփեց նոյեմբերի 5-ին կայացած նախագահական ընտրությունների վերջնական արդյունքները: Ըստ այդմ, երկրի 3120557 ընտրողներից ընտրություններին մասնակցել է 2139369-ը: Նրանցից 2121512-ը մասնակցել է նախագահական ընտրություններին: Տարբեր պատճառներով 57280 քվեաթերթիկներ անվավեր են ճանաչվել: Նախագահական ընտրությունների արդյունքով, ձայների մեծամասնությունը՝ 1589909, շահել է է դուարդ Շեւարդնաձեն: Նրան հետևում է Լիպարտելիանին՝ 31350 ձայն, Պատիաշվիլին՝ 414303 ձայն, Գեորգաձեն՝ 10697 ձայն, Գարիբաշվիլին՝ 10023 ձայն:

Ռուսաստանը խոստացել է մարել պարտքը ՄԱԿ-ին յոթ տարվա ընթացքում

Ռուսաստանը որոշել է յոթ տարվա ընթացքում լրիվ մարել իր պարտքը Միավորված ազգերի կազմակերպությանը: Այս մասին, ինչպես նոյեմբերի 15-ին հաղորդել է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, հայտարարել է ՄԱԿ-ում Ռուսաստանի Դաշնության մշտական ներկայացուցիչ Սերգեյ Լավրովը՝ Գլխավոր ասամբլեայի կողմից կազմակերպության ծախսերի ֆինանսական դրության քննարկման ընթացքում: Նրա խոսքով, Ռուսաստանն արդեն այս տարի ՄԱԿ-ի բյուջե է մուծել ավելի քան 323 միլիոն դոլար: Ռուսաստանի ներկայացուցիչը նշել է, որ, չնայած որոշակի տնտեսական դժվարություններին, երկիրը վերջին երկու տարվա ընթացքում լրիվ մուծել է իր վճարումները ՄԱԿ-ի կանոնավոր բյուջե: Այս տարվա կեսերի դրությամբ Ռուսաստանի ամբողջ պարտքը ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեին եւ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների բյուջեին կազմել է 600 միլիոն դոլար, մինչդեռ ԱՄՆ-ի այս ցուցանիշն անցել է մեկ միլիարդ դոլարից:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Պորտուգալիան սասար կկանգնի Թուրքիային

ԱՆԿԱՐԱ, 15 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Նոյեմբերի 14-ին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հեռախոսազրույց է ունեցել Պորտուգալիայի նախագահ Մարիո Սուարեշի հետ, որի ընթացքում շնորհակալություն է հայտնել վերջինիս եվրոպական մաքսային միության մեջ Թուրքիայի ընդգրկման ուղղությամբ ծավալած աշխատանքի համար: Մ. Սուարեշը խոստացել է առաջիկայում եւս կարելվույն չափ նպաստել, որպեսզի գալիք տարվա հունվարից Թուրքիան մաս կազմի այդ միությանը: Միաժամանակ Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը հանդիպումներ է ունենալու Իսպանիայում: Նախ նա նույն մաքսային միության հարցը կքննի երկրի վարչապետ Ֆելիպե Գոնսալեսի հետ, ապա ընդունելության կարժանանա Իսպանիայի թագավորի կողմից:

Հայկական Միջազգային տրանսպորտային ընկերությունն օգտվելով իր հիմնադիրների 40 տարվա փորձառությունից առաջարկում է բեռների ապահով տեղափոխում ծովային, ցամաքային, եւ օդային ուղիներով աշխարհի ցանկացած կետից դեպի Հայաստան եւ հակառակ ուղղությամբ:



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր ծառայություններից օգտվելու համար կարող եք դիմել

Երեւան, Վարդանանց 13, 2-րդ հարկ. Հեռախոս. 56-46-76, 52-88-49, 57-05-61. AT&T 151-739, ֆաքս 520-669

A STYLE

ՀԱՍԱՐՈՍ

«BMW»-ն ուզում է տիրանալ «Ռոլս-Ռոյսին»

Գերմանական «BMW» ընկերությունը հայտնել է բրիտանական «Ռոլս Ռոյս Մոթորզ» առաջատար ավտոմոբիլային ընկերությունը գնելու ցանկության մասին: Որեւէ բանակցություն «Ռոլս Ռոյսի» սեփականատիրոջ հետ «Վիկերս» ընկերությունը դեռեւս չի վարել: «Վիկերսի» պաշտոնական ներկայացուցիչը հայտարարել է, թե «Ռոլս Ռոյսը» միշտ ինքնուրույն ընկերություն է եղել: 1994-ին «BMW»-ն սկսեց «Ռոլս Ռոյսին» շարժիչներ ու սարքավորում մատակարարել: Հենց այդ ժամանակ էլ նա ձեռք էր բերել անգլիական «Ռովեր» ավտոմոբիլային ընկերությունը:

«Բոինգ»-ների պատվերների կեսը ԱՊՀ երկրներից է

հոկտեմբեր ամսին ԱՄՆ-ի սահմաններից դուրս պատվիրված 12 «Բոինգ» ինքնաթիռներից հինգը բաժին հասավ Ուզբեկստանի եւ Թուրքմենիայի ազգային ավիաընկերություններին: «Ուզբեկական ավիաուղիները» պատվիրել է երկու «Բոինգ 767»՝ 196 մլն դոլար եւ մեկ «Բոինգ 757»՝ 62 մլն դոլար արժողությամբ: Իսկ «Թուրքմենստանի ավիաուղիները» երկու «Բոինգ 757»-ի պատվեր են արել, որը կկազմի 124 մլն դոլար: «Բոինգի» ոչ ամերիկյան մյուս հաճախորդների պատվերների արժեքը հոկտեմբերին կազմեց ընդամենը 246 մլն դոլար:

ՖԻՆԱՆՍՈՎԻԵ ԻԶՎԵՍՏԻԱ

ՀԱՐԾԱԽՈՒՅԶ

Ֆրանսիացիները հաճախ են տուն փոխում

Ֆրանսիայի հանրային հետազոտությունների հաստատության անցկացրած մի հետազոտության համաձայն, Ֆրանսիացիներին դժվար է նստակյաց ժողովուրդ համարել: երկրի բնակիչների 58 տոկոսը արդեն տուն է փոխել 3 կամ ավելի անգամ: Առավել շարժունակ են բարձրորակ մասնագետները եւ մասավոր զբաղմունքների ներկայացուցիչները. երբեմն կամ ավելի անգամ տունը փոխել է նրանց 72 տոկոսը, մինչդեռ բանվորների շրջանում այդ ցուցանիշը հասնում է 52 տոկոսի: 25-49 տարեկանները գրեթե կրկնակի շատ են կացարան փոխում, քան 65-ից բարձր տարիք ունեցողները: Դա բնական է, քանի որ երիտասարդները ավելի շատ են աշխատանք որոնում:

L'EXPRESS

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ «Ազգը» աշխատանքի է հրավիրում ՍՐԲԱԳՐՉԻ:

Նախընտրելի են հաղարի կենտրոնում կամ Բաղրամյան-Կոմիտաս-Նորքի զանգվածներ երթուղու մերձակայքում բնակվողները:

30 դրամ — Գ. Մագիստրոսի անվ. բժիշկների ընկերակցություն — Ապահովագրական ընկերության դեղատնային գանց

ՁԵԿԸ ՄԱՍՍ Է ԴԵՂԱՏԱՆԵ

30 դրամանոց այս չեկը Ձեզ թույլ կտա խնայողություն անել մեզանից հետեւյալ հասցեներով ատաղձների հաբեր գնելիս

- Հալաբյան 19 (տնտ. խանութ)
- Տիգրան Մեծի 71 (գործվածքեղեն)
- Բաղրամյան 54 (Կանոյի դարոցի կանգառ)
- Ավան, Հ. Հովհաննիսյան տեղամաս (ունիվերսամ թիվ 702)
- Ե. Քոչարի 27 (հացի խանութի հետեւում)
- Տիգրան Մեծի 29 («Բարկեն» խանութ)

30 դրամ

Սպ. # 975

«ՏՈՒՐԻՆԵՏՈ» ՌԴՀ ռուս-հայ-ֆրանսիական համատեղ ձեռնարկությունը հրավիրում է այցելել աշխարհի 153 երկրներ

ՄԻԱՅՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ.

- ավիատոմսեր, տուրիստական ուղեգրեր, վիզաներ,
- հրապուրիչ գներ,
- տոմսերի անվճար ամրագրում եւ առաքում պատվիրատուին,
- արժանավայել վերաբերմունք

Գիմել՝ Թումանյան 34

Զանգահարել՝ 56-76-76

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների առաջարկի եւ պահանջարկի մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սկիզբ»

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արամյանցաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1990. Տպաքանակը՝ 7000. Ստորագրված է տպագրության 14.11.1995. Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@